Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 25-ի N 1112 - Ն որոշման

ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում ու սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով սահմանված կազմակերպություններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ բնակչության սոցիալական պաշտպանության այլ տիպերի հաստատություններում (շուրջօրյա խնամքի տներ, սատարող կացարաններ, համայնքային ցերեկային կենտրոններ և այլն) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, նշված հաստատություններում խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով:

4. Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամք տրամադրում են «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝

սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություն):

5. Խնամք տրամադրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

6. Խնամք տրամադրվում է անձի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ՝ բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքի: «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով խնամք տրամադրվում է առանց տվյալ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության:

II. ԽՆԱՄՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

7. Խնամք կարող է տրամադրվել՝

1) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.

3) խնամք տրամադրող կազմակերպության նախաձեռնությամբ:

8. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպության կողմից տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց

խնամք տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ այդ անձանց բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժնի (այսուհետ՝ գործակալություն) ղեկավարի որոշմամբ՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

9. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպության կողմից տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամք տրամադրվում է այդ կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի (կամ մարմնի) կողմից ընդունված անհատական իրավական ակտի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով, այլ նորմատիվ իրավական ակտերով և կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

10. Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձը խնամք տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով կարող է ներկայացնել՝

1) գործակալություն (իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի առկայության դեպքում՝ միասնական ընդունարան)՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպության կողմից խնամքի տրամադրման համար.

2) խնամք տրամադրող կազմակերպություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպության կողմից խնամքի տրամադրման համար:

11. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում կամ տնային պայմաններում խնամքի տրամադրման համար ներկայացվող դիմումին կից, բացառությամբ

սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքի, անձը գործակալություն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) խնամքի տրամադրում հայցող անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու դեպքում՝

ա. անձնագիրը կամ նույնականացման քարտը,

բ. նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայություն-ների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական քարտը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքը.

2) խնամքի տրամադրում հայցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակու-թյան իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղա-քացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը (կացության քարտը), իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.

3) հաշմանդամության վերաբերյալ տեղեկանքը՝ տրված բժշկասոցիալական փորձա-քննություն իրականացնող մարմնի կողմից, եթե անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է որպես հաշմանդամություն ունեցող անձ.

4) անձի բժշկական քարտը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալա-կան հարցերի նախարարի ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի համատեղ հրամանով հաստատված ձևին համապատասխան կամ Հայաստանի Հանրա-պետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավել-վածի հիվանդությունների ցանկում ներկայացված հիվանդություններով հիվանդ չլինելու

հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ (փաստաթղթեր)՝ տրված համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից:

12. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքի տրամադրման համար ներկայացվող դիմումին կից, բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքի, անձը գործակալություն է ներկայացնում սույն կարգի 11-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև՝

1) անձի անգործունակ ճանաչված լինելու դեպքում՝

ա. անգործունակ ճանաչելու մասին դատարանի վճիռը կամ դրա պատճենը,

բ. անձի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը.

2) անձի բժշկական քարտը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի համատեղ հրամանով հաստատված ձևին համապատասխան կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավելվածի հիվանդությունների ցանկում ներկայացված հիվանդություններով (բացառությամբ այդ հավելվածում նշված հոգեկան հիվանդությունների) հիվանդ չլինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթը (փաստաթղթերը)՝ տրված համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից, ինչպես նաև քաղվածք անձի հիվանդության պատմությունից կամ հոգեբուժական դիսպանսերի բժշկական քարտից:

13. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում խնամքի տրամադրման համար ներկայացվող դիմումին կից, բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքի, անձը գործակալություն է ներկայացնում սույն կարգի 11-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը:

14. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում խնամք տրամադրելու վերաբերյալ դիմումն անձի ներկայացուցչի կողմից ներկայացնելիս պահանջվում են նաև ներկայացուցչի նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ սույն կարգի 11-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերին համապատասխան (իսկ կացության քարտ չունեցող, բայց Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող օտարերկրյա քաղաքացու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում նրա օրինական գտնվելը հավաստող վավերական փաստաթուղթը), ինչպես նաև՝

1) անձի օրինական ներկայացուցիչը լինելու դեպքում՝ խնամակալը կամ հոգաբարձուն հանդիսանալու փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող լիազորագրի հիման վրա անձի ներկայացուցիչը լինելու դեպքում՝ լիազորագիրը, իսկ այն դեպքում, երբ ներկայացուցիչը փաստաբան է՝ նաև փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

15. Անձի անգործունակ ճանաչված լինելու դեպքում սույն կարգի 12-րդ կետում նշված դիմումը ներկայացնում է տվյալ անձի խնամակալը:

16. Խնամքի տրամադրման համար գործակալություն ներկայացվող դիմումին կից չեն պահանջվում սույն կարգի 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերում նշված այն փաստաթղթերը, որոնցում ներառված տվյալներն առկա են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում (բազաներում):

17. Անձի դիմումն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում գործակալության սոցիալական աշխատանքի մասնագետը կատարում է տնային այցելություն՝ տվյալ անձի ընտանիքի կարիքների գնահատման (կենսապայմանների ուսումնասիրության) նպատակով:

18. Տնային այցելություն կատարելուց հետո եռօրյա ժամկետում գործակալության սոցիալական աշխատանքի մասնագետը տնային այցելության արձանագրությունն անձին

խնամք տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ եզրակացության հետ միասին ներկայացնում է գործակալության պետին:

19. Գործակալության պետը սույն կարգի 18-րդ կետով նախատեսված փաստաթղթերի հիման վրա ոչ ուշ, քան դրանք ստանալուց հետո եռօրյա ժամկետում ընդունում է որոշում խնամք տրամադրելու կամ խնամքի տրամադրումը մերժելու մասին: Ընդ որում, խնամք տրամադրելու մասին որոշման մեջ նշվում է տրամադրման ենթակա խնամքի տեսակը:

20. Գործակալությունը խնամք տրամադրելու մասին որոշման պատճենը եռօրյա ժամկետում ներկայացնում է սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորած պետական մարմին):

21. Լիազորած պետական մարմինը գործակալությունից ստացած որոշումների հիման վրա իրականացնում է խնամքի տրամադրում հայցող անձանց հաշվառում՝ ըստ դիմումները ներկայացնելու հերթականության (օրը, ամիսը, տարեթիվը) և տրամադրման ենթակա խնամքի տեսակի, կազմում է համապատասխան հերթացուցակներ ու համակարգում է այդ անձանց խնամքի տրամադրման գործընթացը: Ընդ որում, բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքի տրամադրում հայցող անձանց հաշվառումն իրականացվում և համապատասխան հերթացուցակները կազմվում են նաև այդ անձանց կլինիկական վիճակի, սոցիալական հմտությունների և կարողությունների գնահատումը հաշվի առնելով, այդ նպատակով ստեղծված մասնագիտացված հանձնաժողովների համապատասխան եզրակացություններով տրված մասնագիտական գնահատականների հիման վրա: Խնամքի տրամադրում հայցող անձանց հաշվառման, ինչպես նաև խնամքի տրամադրում հայցող անձանց կլինիկական վիճակի, սոցիալական հմտությունների և կարողությունների գնահատումն իրականացնելու կարգը (այդ թվում՝ գնահատման մեթոդաբանությունը և չափորոշիչները), մասնագիտացված հանձնաժողովների ձևավորման կարգը, աշխատակարգը և նրանց կողմից տրամադրվող եզրակացության ձևը հաստատվում է լիազորած պետական մարմնի ղեկավարի կողմից:

22. Լիազորած պետական մարմինը խնամք տրամադրող կազմակերպություններից ստանալով համապատասխան տեղեկատվություն խնամք տրամադրելու հնարավորության (բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատությունում կամ սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում ազատ տեղերի կամ տնային պայմաններում խնամք տրամադրելու հնարավորության) վերաբերյալ՝ դրա մասին անմիջապես տեղեկացնում է համապատասխան հերթացուցակում առաջին համարը զբաղեցնող անձի խնամքի տրամադրման վերաբերյալ որոշում կայացրած գործակալությանը:

23. Գործակալությունը, լիազորած պետական մարմնից ստանալով սույն կարգի 22-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը, ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում անձին ուղեգրում է (տրամադրում է ուղեգիր) խնամք տրամադրող համապատասխան կազմակերպություն՝ այդ մասին մեկօրյա ժամկետում իրազեկելով լիազորած պետական մարմնին: Անձի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա՝ սույն կարգի 25-րդ կետում նշված դեպքերում ուղեգրումը կարող է հետաձգվել մինչ վեց ամիս ժամկետով, ինչի վերաբերյալ գործակալությունը լիազորած պետական մարմնին տեղեկացնում է համապատասխան դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

24. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամքի տրամադրման համար անձը կարող է բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատություն ներկայանալ սույն կարգի 23-րդ կետով նախատեսված ուղեգիրը ստանալու օրվանից յոթօրյա ժամկետում: Սույն կետով սահմանված ժամկետում բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատություն չներկայանալու դեպքում, ոչ ուշ, քան ուղեգրի ժամկետը լրանալու օրվանից հետո յոթ օրվա ընթացքում, անձն ուղեգիրը վերադարձնում է գործակալություն՝ գրավոր տեղեկացնելով բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չներկայանալու պատճառների մասին: Գործակալությունն անձի կողմից ուղեգիրը վերադարձնելու մասին եռօրյա ժամկետում իրազեկում է լիազորած պետական մարմնին:

25. Այն դեպքում, երբ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի չներկայանալը պայմանավորված է եղել սույն կետում նշված հարգելի պատճառներով, գործակալությունն անձին տրամադրում է նոր ուղեգիր: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չներկայանալու հարգելի պատճառներ են համարվում՝

1) խնամքի տրամադրում հայցող անձի հիվանդությունը.

2) տնային (ամբուլատոր) պայմաններում խնամքի տրամադրում հայցող անձի կողմից ընտանիքի հիվանդ անդամի խնամքը.

3) խնամքի տրամադրում հայցող անձի կողմից հիվանդանոցային բժշկական հաստատությունում գտնվող՝ ընտանիքի անդամ հանդիսացող մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի խնամքը, այն դեպքում, երբ երեխայի ծնողը (կամ խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի այլ հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բժշկական հաստատությունում գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել.

4) ուղեգիրը ստանալու օրվանից հետո յոթ օրվա ընթացքում խնամքի տրամադրում հայցող անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) մահվան դեպքերը, ինչը պետք է հավաստվի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված մահվան վկայականով և համապատասխան այնպիսի այլ փաստաթղթերով (ծննդյան վկայական, անձնագիր, ամուսնության վկայական), որոնցով հավաստվում է խնամքի տրամադրում հայցող և մահացած անձանց միջև մերձավոր ազգակցությունը.

5) արտակարգ և անկանխատեսելի այնպիսի հանգամանքները (անհաղթահարելի ուժ), ինչպիսիք են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, տեխնածին և տարերային այլ աղետները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,

որոնք օբյեկտիվորեն անհնար են դարձրել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի ներկայանալը:

26. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չներկայանալու վերաբերյալ գործակալությանը հարգելի պատճառներ չներկայացնելու կամ ուղեգրի ժամկետը լրանալու օրվանից հետո յոթ օրվա ընթացքում այն գործակալությանը չվերադարձնելու դեպքում գործակալությունն այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է լիազորած պետական մարմնին: Սույն կետով նախատեսված տեղեկատվությունը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում լիազորած պետական մարմինը տվյալ անձին հանում է խնամքի տրամադրում հայցող անձանց հաշվառումից և այդ մասին տեղեկացնում է գործակալությանը:

27. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, խնամակալության ու հոգաբարձության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր ու բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և այլ աղբյուրների միջոցով անձի անօգնական վիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում գործակալության կողմից անհապաղ կազմակերպվում է իրավիճակի ուսումնասիրություն՝ տեղեկատվության հավաստիությունը ճշտելու նպատակով: Անձի անօգնական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը հավաստվելու դեպքում գործակալության ղեկավարը նույն օրն ընդունում է խնամք տրամադրելու մասին որոշում ու կազմակերպում անձին անհրաժեշտ օգնություն տրամադրելու և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխելու աշխատանքները՝ այդ մասին մեկ օրվա ընթացքում տեղեկացնելով լիազորած պետական մարմնին:

28. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, գործակալության, պետական և տեղական ինքնակառա-

վարման մարմինների, խնամակալության ու հոգաբարձության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր ու բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և այլ աղբյուրների միջոցով անձի անօգնական վիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպությունն այդ մասին անմիջապես տեղեկացնում է գործակալությանը՝ սույն կարգի 27-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով: Սույն կետում նշված տեղեկատվությունը ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին ստանալու կամ անօգնական վիճակում հայտնված անձի՝ ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին կազմակերպությանը դիմելու դեպքում կազմակերպությունն անհապաղ ձեռնարկում է անձին անհրաժեշտ օգնության և խնամքի տրամադրման համար անհրաժեշտ միջոցառումները՝ այդ մասին մեկ օրվա ընթացքում տեղեկացնելով լիազորած պետական մարմնին և գործակալությանը անձի ուղեգրումը կազմակերպելու համար:

29. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցառումներ՝ սեփական նախաձեռնությամբ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամք տրամադրելու նպատակով: Անօգնական վիճակում գտնվող անձի՝ խնամքի տրամադրումից հրաժարվելու դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունը տվյալ անձի մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվությունն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում տրամադրում է գործակալությանը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եզրակացությունը կազմելու և դրա հիման վրա, այդպիսի անհրաժեշտության առկայության դեպքում, խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու մասին որոշում ընդունելու նպատակով:

III. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼԸ

30. Գործակալությունը մերժում է տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում ու սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում խնամքի տրամադրումը՝

1) եթե խնամքի տրամադրում հայցող անձը տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավելվածի հիվանդությունների ցանկում ներկայացված որևէ հիվանդությամբ՝ այդ մասին մասնագիտացված բժշկական հաստատության տված եզրակացության հիման վրա.

2) խնամքի տրամադրման համար օրենքով սահմանված բավարար հիմքերի բացակայության դեպքում.

3) առանց հարգելի պատճառների, սույն կարգի 24-րդ կետով նախատեսված ժամկետում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չներկայանալու դեպքում.

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

31. Գործակալությունը մերժում է բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքի տրամադրումը՝

1) եթե խնամքի տրամադրում հայցող անձը տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավելվածի հիվանդությունների ցանկում ներկայացված որևէ հիվանդությամբ (բացառությամբ այդ հավելվածում նշված հոգեկան հիվանդությունների)՝ այդ մասին մասնագիտացված բժշկական հաստատության տված եզրակացության հիման վրա.

2) սույն կարգի 30-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում:

32. Սույն կարգի 30-րդ և 31-րդ կետերի 1-ին ենթակետերում նշված հիմքերով խնամքի տրամադրումը մերժելու դեպքում գործակալությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետու-

թյան կառավարության լիազորած պետական մարմնին՝ անձի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ նրա բուժման գործընթացը մասնագիտացված բժշկական հաստատությունում կազմակերպելու համար:

IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

33. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են սահմանվել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների թվին և հաստիքներին), միաժամանակյա խնամք ստացողների առավելագույն թվին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստի, սպիտակեղենի, կոշկեղենի, անկողնային և անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների անվտանգության ապահովմանը և այլ պայմաններին ներկայացվող պահանջները:

34. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը պետք է ունենան ներքին կարգապահական կամ համակեցության կանոններ (այսուհետ՝ կանոններ)՝ հաստատված խնամք տրամադրող կազմակերպության համապատասխան լիազորություններով օժտված մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից:

V. ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

35. Տնային պայմաններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, տարեց, չաշխատող (բացառությամբ տնային պայմաններում աշխատող) անձանց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց անհատական սոցիալական ծրագրի համաձայն, հիմնականում սոցիալական ծառայությունների հետևյալ ձևերով՝

1) կենցաղային սպասարկում.

2) բժշկական օգնություն և սպասարկում.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) խորհրդատվական օգնություն:

36. Խնամքը տրամադրվում է ցերեկային ժամերին՝ ժամը 10:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, անձի բնակության վայրում՝ նրա գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան:

37. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կամ լիազորած պետական մարմնի հետ կնքած պայմանագրի հիման վրա տնային պայմաններում խնամք տրամադրող կազմակերպությունը սույն կարգի 23-րդ կետով նախատեսված ուղեգիրը ստանալուց հետո յոթօրյա ժամկետում կազմակերպության սոցիալական աշխատողից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի միջոցով իրականացնում է տնային այցելություն, որի արդյունքում անձի հետ կնքում է համապատասխան պայմանագիր տնային պայմաններում խնամքի տրամադրման վերաբերյալ:

38. Լիազորած պետական մարմնի հետ համապատասխան պայմանագիր չկնքած՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունները տնային խնամքը կարող են տրամադրել սեփական նախաձեռնությամբ՝ առանց սույն կարգի 23-րդ կետով նախատեսված ուղեգրի առկայության:

39. Տնային պայմաններում խնամքի տրամադրումը դադարեցվում է՝

1) խնամք ստացող անձի (նրան ներկայացուցչի) գրավոր դիմումի հիման վրա.

2) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով խնամք ստացող անձի հիվանդանալու դեպքում մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա.

3) խնամք ստացող անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելու դեպքում.

4) տնային պայմաններում խնամք տրամադրելու հիմքերի վերացման դեպքում.

5) խնամք ստացող անձի մահվան դեպքում.

6) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

VI. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

40. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ապահովում են շուրջօրյա լրիվ խնամքով:

41. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված անձանց՝ բացառությամբ սույն կարգի 42-րդ կետում նշված անձանց՝

1) տարեց, միայնակ, չաշխատող կենսաթոշակառուներին.

2) տասնութ տարին լրացած, հաշմանդամություն ունեցող անձանց.

3) ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող տարեց անձանց.

4) տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտանիքում բռնության, սոցիալական մեկուսացվածության կամ բարոյահոգեբանական անհամատեղելի իրավիճակի առկայության դեպքում:

42. Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ 18 տարին լրացած, քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող անձանց կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով անձանց:

43. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կարող է խնամք տրամադրել սույն կարգի 41-րդ և 42-րդ կետերում չնշված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող այլ անձանց:

44. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները կազմակերպում են այնտեղ բնակվող (խնամվող) անձանց՝

1) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

2) սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը.

3) իրավական խորհրդատվության տրամադրումը.

4) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը.

5) բժշկասոցիալական փորձաքննությունը.

6) հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրելը.

7) ազատ ժամանցը.

8) ուսումնադաստիարակչական ծառայությունները.

9) աշխատանքային թերապիան:

45. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն այնտեղ բնակվող (խնամվող) անձանց տրամադրում են՝

1) սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ, ընդ որում հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար բժշկի ցուցումով նշանակվում է դիետիկ սնունդ.

2) մահճակալ և անհրաժեշտ այլ կահույք.

3) հագուստ, սպիտակեղեն, կոշկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան.

4) անկողնային պարագաներ.

5) անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ, սափրվելու պարագաներ և այլն)։

46. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն իրականացնում են տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու խնամքի տրամադրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ։

47. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի ընդունելությունը ձևակերպվում է այդ հաստատության ղեկավարի հրամանով։ Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի ընդունելությունը ձևակերպվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով։

48. Անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելիս այդ հաստատության համապատասխան իրավասություններ ունեցող աշխատողը (կամ պաշտոնատար անձը) վերցնում է նրա հագուստը և անձնական իրերը՝ ախտահանման նպատակով։

49. Անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելուց անմիջապես հետո նրան զննում է այդ հաստատության բժիշկը, որոշում ընդունելության համար բժշկական հակացուցումների առկայությունը կամ բացակայությունը ու

տալիս եզրակացություն տվյալ անձին սանիտարական մշակման ուղարկելու և հատուկ առանձնացված սենյակում (մեկուսարանում) տեղավորելու անհրաժեշտության առկայության (կամ բացակայության) վերաբերյալ: Ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելու դեպքում անձը տեղավորվում է հատուկ առանձնացված սենյակում (մեկուսարանում) մինչև բժշկի կամ համապատասխան բժշկական հաստատության կողմից նրա առողջական վիճակի մասին եզրակացության տրամադրումը: Սույն կետով նախատեսված դեպքերում անձը կարող է հատուկ առանձնացված սենյակում տեղավորվել ոչ ավելի, քան երեք օրով:

50. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չի թույլատրվում բերել հրազեն, այն համալրող դետալներ, սառը զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր, դյուրավառ կամ այրիչ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր (բացառությամբ բժշկի կողմից նշանակված հոգեմետ (հոգեներգործուն) դեղամիջոցների), ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքեր: Սույն կետում նշված առարկաների կամ նյութերի հայտնաբերման դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) դրա մասին անմիջապես իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

51. Սույն կարգի 47-րդ կետում նշված հրամանի ընդունումից անմիջապես հետո բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) ընդունված անձի մասին տվյալները գրանցում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանում, որի ձևը հաստատում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձը (կամ մարմինը):

52. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանը կարող է վարվել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները համակարգչում մուտքագրելու միջոցով: Ընդ որում, հաշվառման մատյանը միաժամանակ թղթային և էլեկտրոնային եղանակներով կազմելու և վարելու դեպքում դրանցում ներառված տվյալները և տեղեկություններն ամբողջությամբ պետք է համապատասխանեն միմյանց: Թղթային եղանակով վարվող հաշվառման մատյանը պետք է լինի համարակալված և էջակարված: Թղթային եղանակով վարվող հաշվառման մատյանը լրացվում է մուգ կապույտ կամ սև թանաքով գրիչով, ընթեռնելի ձեռագրով՝ առանց անհարկի հապավումներ և ջնջումներ կատարելու: Սխալ գրառման դեպքում այն երկու կողմից վերցվում է փակագծերի մեջ, որից հետո կատարվում է ճիշտ գրառումը և հաշվառման մատյանի տվյալ էջի աջ անկյունում գրառում կատարող համապատասխան աշխատողի (պաշտոնատար անձի) կողմից լրացվում են «Ուղղումը կատարված է իմ կողմից» բառերը, և ուղղումը հավաստվում է ստորագրությամբ:

53. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր անձի համար բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության սոցիալական աշխատանքի մասնագետը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (կամ պաշտոնատար անձը) լրացնում է հաշվառման քարտ, որտեղ գրանցում է այդ հաստատությունում բնակվող (խնամվող) անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1) անունը, հայրանունը, ազգանունը.

2) ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

3) սեռը.

4) անձը հաստատող փաստաթղթի տեսակը.

5) անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը.

6) հանրային ծառայությունների համարանիշը կամ սոցիալական քարտի համարը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի համարը.

7) մինչ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելը տվյալ անձի հաշվառման հասցեն, իսկ հաշվառման մեջ չգտնվելու դեպքում՝ վերջին կամ նախկին հաշվառման հասցեն.

8) ընտանեկան դրությունը.

9) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունման և դուրս-գրման օրը, ամիսը, տարեթիվը:

54. Հաշվառման քարտում կարող են լրացվել նաև սույն կարգի 53-րդ կետում չնշված՝ անձի վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալներ:

55. Անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կրկին ընդունելու (դուրս գրելու) դեպքում նրա հաշվառման քարտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում և անհրաժեշտության դեպքում փոփոխվում են հաշվառման քարտում գրանցված տվյալները:

56. Հաշվառման քարտի ձևը հաստատում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձը (կամ մարմինը): Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում անձի բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում տվյալ անձի հաշվառման քարտը պահվում է քարտարանում, իսկ անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից դուրս գրելու դեպքում հաշվառման քարտը պահվում է տվյալ անձի անձնական գործում:

57. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) անձանց առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը նրանց այնտեղ բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող)

անձանց առաջնային բժշկական օգնությունը ցույց է տալիս այդ հաստատության բժիշկը և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի համապատասխան բժշկական հաստատությունը: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր անձի համար լրացվում է բժշկական քարտ, որտեղ գրանցվում են նրա անձնական տվյալները, ինչպես նաև կատարված բժշկական զննության, իրականացված կլինիկալաբորատոր հետազոտությունների արդյունքները, ցույց տրված բժշկական օգնությունը և անհրաժեշտ այլ տվյալներ:

58. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության բժիշկը յուրաքանչյուր օր կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) բոլոր անձանց համայց և նրանց ցույց տալիս անհրաժեշտ բժշկական օգնություն, իսկ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ իրականացնում է այդ հաստատությունում բնակվող (խնամվող) բոլոր անձանց բժշկական զննություն և կատարում գրառում նրանց բժշկական քարտերում:

59. Անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելիս, ինչպես նաև անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվելու (խնամվելու) ժամանակահատվածում զննման արդյունքում կամ համապատասխան բժշկական հաստատության կողմից տրամադրված եզրակացության համաձայն շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության կասկածի կամ բժշկական այլ հակացուցումների հայտնաբերման դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության բժիշկը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (կամ պաշտոնատար անձը) անձին տեղավորում է հատուկ առանձնացված սենյակում (մեկուսարանում), ձեռնարկում անհրաժեշտ միջոցներ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) այլ անձանց հետ տվյալ անձի անմիջական շփումը բացառելու համար, մեկօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի պետական հակահամաճարակային տեսչության տարածքային

կենտրոն և, ըստ անհրաժեշտության, ապահովում անձի տեղափոխումը մասնագիտացված բժշկական հաստատություն:

60. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը, ըստ անհրաժեշտության, կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) անձանց՝ համապատասխան բժշկական հաստատություններ ուղեգրման գործընթացը: Խնամվողին հիվանդանոցային բժշկական հաստատություն տեղափոխելու դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունը կազմակերպում է նրա սննդի ապահովումը, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատությունը՝ նաև խնամքը:

61. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության սոցիալական աշխատողը սույն կարգի 47-րդ կետում նշված հրամանի ընդունումից հետո եռօրյա ժամկետում գնահատում է անձի սոցիալական կարիքները, իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է նրա անհատական ծրագրով նախատեսված միջոցառումները, դրանում նախատեսված ժամկետներում մասնակցում է մասնագիտական քննարկումներին և տվյալ անձի սոցիալական կարիքներին համապատասխան՝ նրան տրամադրում է սոցիալական ծառայություններ:

62. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձանց կարող են այցելել նրանց ընտանիքի անդամները, ազգականներն ու ծանոթները, աջակցող ցանցի անդամները (նրանց ներկայացուցիչները), պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ և անձինք: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձանց կողմից սույն կետում նշված անձանց ընդունելությունն իրականացվում է կանոններով սահմանված ընթացակարգին համապատասխան:

63. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձինք այդ հաստատության ղեկավարի հրամանով կարող են տարվա մեջ

առավելագույնը 90 օրով դուրս գրվել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից՝ իրենց ազգականներին հյուրընկալվելու նպատակով՝ իրենց կամ իրենց ազգականի գրավոր դիմումի հիման վրա:

64. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում բնակվող (խնամվող) անձը հոգեկան առողջության խնդիրներ ունենալու դեպքում, նրա կլինիկական վիճակի գնահատման նպատակով կատարված սկրինինգ-հետազոտությունների արդյունքներով տրված մասնագիտական գնահատականի և հոգեկան առողջության վերաբերյալ հոգեբույժի եզրակացության հիման վրա, տեղափոխվում է բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի համար նախատեսված այլ հաստատություն:

65. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատության ղեկավարը սույն կարգի 64-րդ կետում նշված եզրակացությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում անձի ընտանիքի անդամներին (առկայության դեպքում) տեղեկացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի համար նախատեսված այլ հաստատություն անձի տեղափոխման անհրաժեշտության մասին: Անձի հոգեկան խանգարման դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատության ղեկավարը սույն կետով սահմանված ժամկետում տեղեկացնում է նաև այդ հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելու համար:

66. Անձի ընտանիքի անդամների բացակայության կամ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունից անձին տեղափոխելուց նրանց

հրաժարվելու դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատության ղեկավարը դիմում է գործակալությանը և այդ հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ սույն կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ անձին բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի համար նախատեսված այլ հաստատություն տեղափոխելու գործընթացը կազմակերպելու համար:

67. Մինչև անձին բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն տեղափոխելը բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունը շարունակում է տվյալ անձին խնամքի տրամադրումը, եթե առկա չէ մասնագիտացված բժշկական հաստատություն տեղափոխելու անհրաժեշտություն և տվյալ անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում գտնվելը վտանգ չի ներկայացնում այնտեղ բնակվող (խնամվող) այլ անձանց համար:

68. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձի մահվան դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (պաշտոնատար անձը) այդ մասին անհապաղ տեղեկացնում է շտապ բժշկական օգնության ծառայությանը՝ մահվան փաստն արձանագրելու, դիակը դիահերձարան տեղափոխելու և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը իրազեկելու համար, ինչպես նաև հանգուցյալի ընտանիքի անդամներին կամ այլ ազգականներին (առկայության դեպքում)՝ հուղարկավորությունը կազմակերպելու համար: Այն դեպքում, երբ մահացած անձը չունի ընտանիքի անդամներ կամ այլ ազգականներ կամ նրանք հրաժարվում են կազմակերպել հուղարկավորությունը կամ մահվան մասին տեղեկացվելուց հետո երկօրյա ժամկետում չեն ներկայանում բնակ-

չության սոցիալական պաշտպանության հաստատություն, հուղարկավորությունը կազմակերպվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության կողմից: Այս դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում անձի մահը օրենքով սահմանված կարգով գրանցելու նպատակով:

VII. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

69. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տրամադրում է կենտրոնում, ցերեկային ժամերին՝ ժամը 09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում:

70. Ելնելով խնամքի տրամադրում հայցող անձանց առանձնահատուկ կարիքներից, տարիքային կազմից, իրենց կանոնադրությամբ ամրագրված նպատակներից և այլ գործոններից՝ կենտրոնները կարող են ունենալ տարատեսակ ուղղվածություններ՝ նախատեսված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց առանձին խմբերի (տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց, այլ սոցիալական խմբերի) համար:

71. Կենտրոնում խնամքը տրամադրվում է սոցիալական աշխատողի (դեպք վարողի) կազմած անհատական սոցիալական ծրագրի հիման վրա՝ անձի գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան:

72. Կենտրոնում խնամքը տրամադրվում է հիմնականում հետևյալ սոցիալական ծառայությունների ձևով.

1) սնունդ՝ օրական մեկ անգամ.

2) սոցիալ-հոգեբանական օգնություն.

3) իրավական խորհրդատվություն.

4) հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային վերականգնման անհատական ծրագրի կազմում, դրանով նախատեսված միջոցառումների իրականացում.

5) արվեստի միջոցով թերապիա.

6) օկուպացիոն թերապիա (շտկիչ վարժանքներով թերապիա):

73. Կենտրոնը կազմակերպում է խնամք ստացողների՝

1) աշխատանքային թերապիան.

2) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

3) ժամանցը, ինչպես նաև մշակութային միջոցառումներ.

4) սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումներ:

74. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կամ լիազորած պետական մարմնի հետ համապատասխան պայմանագիր կնքած կազմակերպությունը կենտրոնում խնամքը տրամադրում է գործակալության կողմից տրված՝ սույն կարգի 23-րդ կետով նախատեսված ուղեգրի հիման վրա:

75. Լիազորած պետական մարմնի հետ համապատասխան պայմանագիր չկնքած՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունը կենտրոնում խնամքը կարող է տրամադրել սեփական նախաձեռնությամբ՝ առանց սույն կարգի 23-րդ կետով նախատեսված ուղեգրի առկայության:

76. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կենտրոններում անձի ընդունելությունը ձևակերպվում է կենտրոնի ղեկավարի հրամանով: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կենտրոններում անձի ընդունելությունը ձևակերպվում է կենտրոնում խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

77. Կենտրոնում խնամքի տրամադրումը դադարեցվում է՝

1) խնամք ստացող անձի (նրա ներկայացուցչի) գրավոր դիմումի հիման վրա.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավելվածի հիվանդությունների ցանկում ներկայացված հիվանդություններից որևէ մեկով խնամք ստացող անձի հիվանդանալու դեպքում՝ մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա.

3) խնամք ստացող անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելու դեպքում.

4) կենտրոնում խնամք տրամադրելու հիմքերի վերացման դեպքում.

5) խնամք ստացող անձի մահվան դեպքում.

6) ալկոհոլ կամ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործած վիճակում խնամք ստացող անձի կողմից կենտրոն այցելելու կամ դրանք կենտրոնում օգտագործելու կամ կենտրոնի այլ կանոնները մեկ տարվա ընթացքում երկու անգամից ավելի խախտելու դեպքում.

7) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

VIII. ԼԻԱԶՈՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

78. Խնամք տրամադրող կազմակերպությունները «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում և կարգով լիազորած պետական մարմնին են ներկայացնում խնամքի տրամադրման մասին տեղեկատվություն:

79. Լիազորած պետական մարմինը ստեղծում և վարում է խնամք ստացող անձանց հաշվառման տեղեկատվական համակարգ՝ լիազորած պետական մարմնի ղեկավարի կողմից հաստատված կարգով:

80. Սույն կարգով նախատեսված դեպքերում գործակալության և լիազորած պետական մարմնի միջև տեղեկատվության փոխանակումը և փաստաթղթերի առաքումն իրականացվում է գրավոր եղանակով՝ փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով կամ էլեկտրոնային փոստի միջոցով կամ առցանց եղանակով՝ սոցիալական աջակցության բնագավառի տեղեկատվական շտեմարանների միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 25-ի N 1112 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Հոգեկան խանգարումներ՝ բացառությամբ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն ընդունվելու դեպքերի

2. Քրոնիկ ալկոհոլամոլություն կամ թմրամոլություն

3. Մաշկային վարակիչ հիվանդություն, սեռավարակներ

4. Օնկոլոգիական հիվանդություններ՝ դեկոմպենսացիայի շրջանում՝ բացառությամբ հոսպիսային օգնության տրամադրման դեպքերի

5. Շրջապատի համար վտանգ ներկայացնող վարակիչ հիվանդություններ

6. Մանրէազատ տուբերկուլյոզ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ